ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀՇՁԲ-32/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

11-ը մարտի 2019թ.
ժամը 17^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կոպտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՎԱ մաքսազերծման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Բաբաջանյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՎԱ մաքսազերծման բաժնի պետի տեղակալ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Ե. Վարդանյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 1-ին դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀՇՁԲ-32/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցներին հայտարարելու մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ն և «Զոհրաբյան և Գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ն /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ն և «Զոհրաբյան և Գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ն /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման մասով՝ ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից 20.02.2019թ. ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ի /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով «Զոհրաբյան և Գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ի հետ/ հայտը ներկայացնելու տարվան նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը, որը կազմում է 54 434 153 ՀՀ դրամ, գերազանցում է ակտիվների հաշվեկշռային արժեքից, որը կազմում է 47 938 573 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 63-րդ կետի բ պարբերությանը, ինչպես նաև «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի մաս 1-ի 2,5 կետի 3-րդ ենթակետի պահանջներին /հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը/:
«Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ի և «Զոհրաբյան և Գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ կողմից ներկայացված հավելված 5.1 /տեղեկանք կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին/ Ձեր կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չի: Բացակայում է «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ փաստաբան ՀՀ քաղաքացի Վանիկ Արտաշեսի Մարգարյանի անձնագրի պատճենը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի քարտուղարը գնահատող հանձնաժողովի որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ին և «Զոհրաբյան և Գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ին /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում /նիստը կասեցվել է/ շտկել վերը նշված անհամապատասխանությունները:
«Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ն և «Զոհրաբյան և Գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ն /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ սահմանված կարգով և սահմանված ժամկետում շտկեց արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությանը:
Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոնշյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ որոշեց մերժել «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ն և «Զոհրաբյան և Գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ հայտը և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով վերջինիս տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:
1.3 11.03.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ մերժել «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ի և «Զոհրաբյան և Գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Գ. Ուստյան
Գնահատող	Հ. Բաբաջանյան
Գնահատող	Ե. Վարդանյան
Գնումները համակարգող՝	Մ. Հոխեյան